ԱՐՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ - 100

ԱԶՆԻՎ ՁԳՏՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ

Այս օրերին Արսեն Կարապետյանը կդառնար 100 տարեկան: Այս անուն-ազգանունը Ախալքալաքի շրջանում տասնյակ տարիներ, մինչեւ նրա մահը եւ մահից հետո, քաջածանոթ է գրեթե բոլորին, եւ, իհարկե, նաեւ շրջանից դուրս՝ Թբիլիսիում, Երեւանում...

Իր ժամանակների վաստակավոր մանկավարժ, հասարակական գործիչ Արսեն Կարապետյանի կյանքի ուղին ազնիվ ձգտումների լուսավոր ճանապարհ էր: Այդ մասին է վկայում թեկուզ նրա ինքնակենսագրության շարադրանքը, իր մարդկային նկարագրի, թերեւս, ամենախոսուն ապացույցներից մեկը, ուր հաճելի զարմանքով, ամեն պահ բախվում ենք ժամանակի ու գործողության ճշգրիտ եւ հետեւողական մանրամասների, որը ոչ այլ ինչ է, քան ազնվաբարո հաշվետվություն՝ իր նիստ ու կացի, իր արարքների, իր նպատակների ու կատարած աշխատանքների մասին: Սեփական անձի եւ իրականության միջեւ սահմանված փոխհարաբերությանը վերին աստիճանի բարեխիղճ մոտեցող մարդը միայն կարող էր այդքան բարեխղճությամբ անդրադառնալ իր անցած ճանապարհին:

...Արսեն Ֆեոդորի Կարապետյանը ծնվել է 1914թ., Վրաստանի Ախալքալաքիի շրջանի Կոթելիա գյուղում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի տարրական դպրոցում, ապա՝ ուսումնառել Ախալքալաքիի յոթամյա դպրոցում, որը չավարտած՝ որպես լավագույն աշակերտ, նշանակվել է հարազատ գյուղի, այսպես կոչված, «Լիկվիդացիոն դպրոցի» ուսուցիչ:

Ուսման ծարավը, այնուհետեւ, նրան նախ դարձնում է Թբիլիսիի Պատանեկան կոմբինատներից մեկի աշակերտ, ապա բերում Ախալքալաքիի միջնակարգ «Ինտերնացիոնալ դպրոց», որն ավարտում է գերազանց առաջադիմությամբ եւ 1937-ի սեպտեմբերից դառնում այն օրերին Ստալինի անունը կրող Թբիլիսիի պետական համալսարանի (այսօր՝ Ի.Ջավախիշվիլու անվան պետական համալսարան) արեւելյան լեզուների ֆակուլտետի ուսանող: Ընտանեկան անապահով պայմանները երիտասարդին ստիպում են մեկ տարի անց տեղափոխվել համալսարանի հեռակա բաժնի վրաց լեզվի եւ գրականության ֆակուլտետ, որն ավարտում է 1941-ին:

1938-1939 թթ.աշխատել է Ախալքալաքիում այն ժամանակ գործող մանկավարժական ուսումնարանի հայկական բաժանմունքի վրաց լեզվի եւ գրականության ուսուցիչ, ապա՝ «Ինտերնացիոնալ դպրոցի» ուսմասվար, իսկ 1939-1941թթ.՝ ծննդավայր Կոթելիայի վրացական դպրոցի ուսմասվար: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ մարտնչել է խորհրդային բանակի շարքերում: Պատերազմի ավարտից հետո՝ 1945-1951 թթ., եղել է Ախալքալաքիի շրջանի ժողկոթբաժվարը, 1956-ից մինչեւ կենսաթոշակի անցնելը՝ 1974թ., զբաղեցրել է Ախալքալաքիի վրացական դպրոցի տնօրենի պաշտոնը:

Արսեն Կարապետյան մտավորականի աշխատանքային հարուստ ու բովանդակալից տարեգրության անբաժանելի մասը նրա հասարակական գործունեությունն է: 1960թ.-ից նա ղեկավարել է հանրապետության մանկավարժական եւ պատմական միությունների շրջանային բաժինը:

Արսեն Կարապետյանն արժանացել է ԽՍՀՄ մի շարք զինվորական ու քաղաքացիական բարձր պարգեւների, «Ժողովրդական կրթության առաջադիմության» կրծքանշանի, ստացել՝ Վրաստանի ԽՍՀ դպրոցի վաստակավոր մանկավարժի կոչում: Համբավավոր մանկավարժն ունեցել է նաեւ գրական նախասիրություններ:

Արսեն Կարապետյանը մահացել է 1995 թվականի նոյեմբերի 15-ին, 81 տարեկան հասակում:

Ասենք, որ նա ուներ հիանալի ընտանիք, եւ նրա որդիները եւս այսօր Ախալքալաքիում ճանաչված ու հարգված մարդիկ են. Նարցիսը տեղի ռեսուրս-կենտրոնի պետն է, Թամազը՝ Վրաստանի բնապահպանության նախարարության Սամցխե-Ջավախեթիի ազգային արգելանոցի տնօրենը, իսկ դուստրերը՝ Զեմֆիրան եւ Գյուլնարան, վրաց լեզվի ճանաչված ուսուցչուհիներ են:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՄԵՐ ՍԵՐՆԴԻ ՆԱՀԱՊԵՏԸ

Իմ հիշողության դաշտում դեռ առկայծում են անհատականություններ, որոնց վաստակն անկշռելի արժեք է համարվել անցնող ժամանակի սերունդների համար:

Մտքերս տեսաժապավենի արագությամբ պտտվում ու հառնում են այդ լուսավոր դեմքերից մեկի դիմաց՝ իբրեւ գերող, հմայող անհատ, ով ոչ միայն իմ, այլեւ մի ամբողջ սերնդի ճշմարիտ ուղեկիցն է եւ առաջնորդիչ ուժը:

Արսեն Ֆեոդորի Կարապետյան...

Մեր սիրելի նահապետ, ներիր, որ քո լեգենդար կյանքը գալիք սերնդին ներկայացնելու եմ հուշերի լեզվով: Անմոռաց դեպքերի մի ամբողջ շղթայից այս փոքրիկ հուշապատումով ներկայացնելու եմ իմ ամբարված երախտագիտության անմոռաց պատառիկները...

Իմ առաջին հանդիպումը քեզ հետ, սիրելի՛ վարպետ, տեղի ունեցավ Ախալքալաքիի այգու աջ անկյունի դիմաց տեղավորված գրադարանում: Մեծերի հետ էիր: Զրուցում էիր արվեստի ու գրականության մասին: 1964 թվականն էր, առջեւում՝ Շոթա Ռուսթավելու հոբելյանական իրադարձությունների նախապատրաստման շրջանը: Գրադարանավարից խնդրեցի մեծ գրողի հայտնի պոեմի աֆորիզմները: Մոտ կանչեցիր ինձ, ես քո հարցերին պատասխանում էի ամոթխածությամբ ու շիկնելով:

Այս հանդիպումը եղավ մեր մեծ բարեկամության սկիզբը:

Անմոռանալի դեպքեր, անջինջ հուշեր, անմոռաց էջեր:

Հիշում եմ՝ կրթության նախարարությանը ներկայացվելու էին ինձ՝ վաստակավոր ուսուցչի կոչման արժանացնելու համար տեղեկատվություններ, որոնք պետք է լինեին երկրի պետական լեզվով: Ինչպիսի՜ ակնածանքով ու լարված ուշադրությամբ պատրաստեցիր համապատասխան բնութագրերն ու երաշխավորագրերը: Կարճ ժամանակ անց, երբ աշխատում էի իմ պատմա-գեղարվեստական «Տառապանքի արշալույսներ» վեպի վրա, որ վերաբերում էր 1830-ական թվականների՝ Էրզրումից բռնի տեղահանմանն ու Սամցխե-Ջավախեթիում վերաբնակեցմանը, պատմական փաստերի արխիվային ճշգրտումներ էին պետք: Հարգարժան նահապետ, առանց ընկրկելու, ձեռահաս եղար ինձ քեզ հետ տանել Թբիլիսի, Վրաստանի պետական արխիվ՝ փաստեր քաղելու «Գյուրջիստանի վիլայեթի մեծ ատյանից»: Ես Գրողների միության անդամ չէի, եւ ինձ քեզ հետ տարար իբրեւ օգնական:

- Պարոն Արսեն, Ձեր առջեւ բաց են պատմության ու արվեստի բոլոր արխիվներն ու թանգարանները,- ասաց արխիվի աշխատակիցը եւ, իմ ով լինելը լսելով, ժպտաց ու մի թեթեւ խոնարհումով հրավիրեց ներս:

Կարճ ժամանակ անց, երբ լույս տեսավ վեպը, իմ մեծարգո վարպետն ինձ հանդիպման հրավիրեց քաղաքի «Մշակույթի տանը»: Պետք էր տեսնել, թե ինչպիսի հրճվանքով ու ոգեւորությամբ էր ներկայացնում գրասեր հանրությանը վեպն ու հեղինակին: Այդ օրվանից ավելի խորացան, ավելի մերձեցան մեր անսահման մտերմությունն ու փոխադարձ նվիրվածությունը:

Ու դա բնական էր, քանի որ մեր սերնդի յուրաքանչյուր ներկայացուցիչ անհնար էր, որ չսովորեր ու չխոնարհվեր այդ արժանավայել ու պատկառազդու մտավորականի առջեւ:

Վաստակավոր ուսուցիչ էր, արվեստի ու մշակույթի վաստակավոր գործիչ, մամուլի հնագույն աշխատող, գրող-մանկավարժ, հասարակական գործիչ, իր ժամանակի գրական ու մշակութային անցուդարձերի անխոնջ մշակ, շրջանի մարդկանց ուրախության ու վշտի պահերի անփոխարինելի սեղանապետ-ճանաչված «թամադա», բոլորի կողմից անվերապահորեն արժեւորված ուսուցչապետ: Բոլորը հարգանքով ու հավատով նրան համարում էին «Քայլող հանրագիտարան»:

Մի առանձնահատուկ վեհությամբ էր խոսում հայ եւ վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության մասին, եւ այդ անխախտ բարեկամության ջատագովն էր մեր միջավայրում: Լեռնաշխարհում ու նրա սահմաններից դուրս չէր կարող լինել մի հոբելյանական իրադարձություն, մի մշակութային եւ հիշարժան տարեդարձ, որի կենտրոնում չլիներ մեր սիրելի նահապետը, ով առանձնակի ուշադրության էր արժանանում թե՛ Թբիլիսիից եւ թե՛ Հայաստանից հրավիրված պատվիրակության անդամների ու ղեկավարների կողմից: Իսկ երբ ամբիոնը տրամադրվում էր այդ հեղինակավոր մարդուն, տոնախմբության մասնակիցներն ու հանդիսականները քար լռությամբ ունկնդրում էին նրա անհամեմատ ուսանելի ու գեղարվեստորեն արժեքավորված ելույթները:

Անհանգիստ էր բնավորությամբ եւ նույնքան անհանգիստ՝ գործունեությամբ: Ամենուրեք էր՝ գյուղացիների հետ հանդիպումներին, յայլաներում, իր կողմից կազմակերպված համերգներին, բեմերին՝ իր ամենատարբեր բնույթի զեկույցներով:

Ճանաչված վարպետը կյանքի վերջին տարիներին Ախալքալաքիի շրջանային «Գավառագիտական թանգարանի» տնօրենն էր: Պետք էր տեսնել, թե ինչպիսի խնամքով եւ վեհությամբ պահում-պաշտպանում էր թանգարանի մասունքները: Եվ երբ կարճ ժամանակով ազատվում էր այցելուներից, իր աշխատասենյակի դիմաց փակցված եղնիկի եղջյուրների տակ էր հրավիրում աշխատակիցներին, լցնում բաժակները կարմրավառ գինով, խփում եղջյուրներին, նույնը պահանջում էր ինձանից՝ ասելով. «Իմ կրտսեր բարեկամ, դարի ու ժամանակի արանքում մեծ կյանքն է, եւ մեծ մնացին միայն նրանք, ովքեր մնացին այդ ժամանակի հարազատ զավակներ»: Եվ սկսում էր զուգահեռներ անցկացնել Նարեկացու եւ Ռուսթավելու, Գուրամիշվիլու եւ Աբովյանի, Ճավճավաձեի ու Սունդուկյանի, Թումանյանի ու Ծերեթելու, ինչպես նաեւ ժամանակի նշանավոր այլ գրողների միջեւ: Ու այդ պահին ինքնաբերաբար մեջ էր բերում Ճավճավաձեի՝ Սունդուկյանին ուղղված հայտնի քառատողը.

«...Ես մի վրացի, իսկ դու հայ ես մի, Երկուսս էլ եղբայր դարձել ենք հիմի, Երկուսս էլ զավակ նույն հողի, ջրի, Եվ նույն բնության, եւ նույն լեռների»:

Եվ այժմ սիրտս լցվում է անբացատրելի հուզմունքով, իմ անմոռանալի նահապետ, հոգիս ամբարված է բազմաբովանդակ հուշերով: Ափսոս միայն, որ այս հուշապատառիկով հնարավոր չէր ավելի լայն կտավով ներկայացնել կենդանի լեգենդ դարձած անհատիդ արծիվ կյանքի լույս ծվեները...

Ուստի, իմ սերնդի անունից խոնարհվում եմ քո ուսանելի խորհուրդների, բարի գործերի ու անմոռանալի կերպարի առջեւ:

Հավերժություն քո անվանն ու հիշատակին:

ՎԱՆԻԿ ԱՎԱԳՅԱՆ
գրող, մանկավարժ
Ախալքալաքիի շրջան

«ՎՐԱՍՏԱՆԻ» ՏԵՂԵԿԱՏՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՅՆՈՒՄ Է ՄԵԿԸ, ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐԻՆ

Խորագիրը վարում է աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության հասարակության հետ կապի դեպարտամենտի պետ ԻՐԻՆԵ ՂԼՈՆՏԻՆ:

ՀԱՐՑ. *Նշանակել են պետական կենսաթոշակ: Ասացեք խնդրեմ, հանրային հաստատությունում աշխատելու դեպքում, պետական կենսաթոշակը կարո՞ղ եմ ստանալ, թե՞ ոչ:*

Հ.ԲՈՆԴՈՅԱՆ

Թբիլիսի

ՊԱՏԱՍԽԱՆ. Հանրային ծառայությունում աշխատելու դեպքում, դուք կենսաթոշակ ստանալ չեք կարող: Պետական փոխհատուցում ստացող անձը, ով սկսում է աշխատել հանրային հաստատությունում, զրկվում է կենսաթոշակից:

ՀԱՐՑ. *Ամուսինս հանրային ծառայող էր: Վերջերս վախճանվեց, սակայն չէր հասցրել օգտվել հերթական արձակուրդից: Կցանկանայի իմանալ, վերջնահաշիվը կազմելու ժամանակ այդ հանգամանքը հաշվի կառնվի՞, թե՞ ոչ:*

Ի.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ախալքալաքի

ՊԱՏԱՍԽԱՆ. «Հանրային ծառայության մասին» Վրաստանի օրենքի 41-րդ հոդվածի համաձայն, ծառայողների համար սահմանված է ամենամյա վճարովի արձակուրդ օրացուցային 30 օրվա տեւողությամբ, որը նա կարող է օգտագործել տարեկան մեկ անգամ լրիվությամբ կամ տարվա ընթացքում՝ բաժին առ բաժին:

Ներկայացված հարցն ընդհանուր բնույթի է, դրանում չի նշված մահվան պատճառը, կոնկրետ ո՞ր ժամանակահատվածի արձակուրդն է մնացել չօգտագործված եւ ինչո՞ւ: Մահվան պատճառը հետաքրքրում է նրա համար, որ, եթե հանրային ծառայողը վախճանվել է ծառայական պարտականությունների կատարման ժամանակ, ապա «Հանրային ծառայության մասին» Վրաստանի օրենքի 49-րդ հոդվածի համաձայն, նրա ընտանիքին տրվելու է միանշանակ 10 հազար լարիի օգնություն: Մնացած դեպքերում, հանգուցյալ հանրային ծառայողի չօգտագործած արձակուրդի փոխհատուցման հանձնման կամ վերջնահաշվում դրա հաշվարկման վերաբերյալ «Հանրային ծառայության մասին» Վրաստանի օրենքում ոչինչ չի ասված:

ՀԱՐՑ. *Ունեմ ի ծնե հաշմանդամ երեխա, որն արդեն 15 տարեկան է: Վերջերս տեղեկացրին, որ անցնելու է բժշկական հանձնաժողովի ստուգում: Զգուշացրին նաեւ, եթե առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության փաստաթուղթ չնշանակվի, ապա, հնարավոր է, կենսաթոշակը հանեն: Որքանո՞վ է դա ճիշտ:*

Վ.ԹԱՐՉՅԱՆ

Ծալկա

ՊԱՏԱՍԽԱՆ. Կենսաթոշակի նշանակման ժամանակ, ձեր որդին պարտադիր պետք է անցնի բժշկական հանձնաժողովի ստուգում: Օրենքի համաձայն, սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների համար, ովքեր մշտապես ունեն այլ անձի օգնության կարիք, «Պետական կենսաթոշակի մասին» Վրաստանի օրենքով նախատեսված է կենսաթոշակ, համապատասխան բժշկական հաստատության կողմից ստուգումն անցնելուց եւ անհրաժեշտ փաստաթղթերի ձեւակերպումից հետո:

ՀԱՐՑ. *35 տարեկան եմ, մահացավ ներքին գործերի նախարարության համակարգում աշխատող ամուսինս: Ունեմ երեք անչափահաս երեխա: Խնդրում եմ պարզաբանել՝ ո՞ւմ պետք է դիմել երեխաների կենսաթոշակի նշանակման հարցով:*

Ս.ԱՍԱՏՐՅԱՆ

Թբիլիսի

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարցում ներկայացված պայմանների համաձայն, անչափահաս երեխաների հոր մահվան կապակցությամբ նշանակվող փոխհատուցման եւ ոչ թե կենսաթոշակի համար խորհուրդ ենք տալիս դիմել սոցիալական սպասարկման գործակալությանը հետեւյալ հասցեով. Թբիլիսի, Ա.Ծերեթելու պողոտա, 144:

ՀԱՐՑ. *Տարիներ առաջ նշանակել էին ակադեմիական կրթաթոշակ: Կցանկանայի պարզել, ո՞ր կարգով է իրականացվում ակադեմիական կրթաթոշակի չափի սահմանումը, եւ որքանո՞վ է դա կախված գիտական աստիճանից:*

Մ.ՋԱՔԱՐՅԱՆ

Նինոծմինդա

ՊԱՏԱՍԽԱՆ. Գործող օրենսդրության համաձայն, պետական ակադեմիական կրթաթոշակի չափը սահմանվում է հանրային ծառայողի նվազագույն աշխատավարձի 80 տոկոսի չափով գիտությունների դոկտորի աստիճան ունեցող անձանց ու բարձրագույն մշակութային հանրակրթական հաստատության պրոֆեսորի գիտական մանկավարժական կոչում ունեցող անձանց համար, 60 տոկոսի չափով՝ գիտությունների թեկնածուի աստիճան ունեցող անձանց եւ բարձրագույն մշակութային հանրակրթական հաստատության դոցենտի գիտական մանկավարժական կոչում ունեցող անձանց համար, 40 տոկոսի չափով՝ գիտական աստիճան չունեցող անձանց համար:

Ð²ðò — ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

Ì²ðÌ°È²Î°ðä

ԳԵՐՀՈԳՆԱԾՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՂԹԱՀԱՐԵԼ

Վերջին ժամանակներս զգում եմ, որ շատ շուտ հոգնում եմ նույնիսկ առաջին հայացքից թեթեւ աշխատանքից: Ծանոթներս ասում են, որ դա գերհոգնածությունից է: Ի՞նչ խորհուրդ կտաք, ինչպե՞ս վարվել:

Պ.Սիմոնյան

Թբիլիսի

Սա օրգանիզմի ֆիզիոլոգիական այն վիճակն է, որը ծագում է չափից ավելի լարված մտավոր կամ ֆիզիկական գործունեության արդյունքում: Այդպիսի դեպքերում, մարդու աշխատունակությունը ժամանակավորապես ընկնում է: Պատճառները տեւական ժամանակահատվածում ոչ բավարար հանգիստը կամ չափից ավելի աշխատանքային ծանրաբեռնվածությունն են: Առանց ֆիզիկական լիցքաթափման, հոգեկան լարվածությամբ եւ պատասխանատվության բարձր զգացումով զուգորդվող մտավոր ինտենսիվ աշխատանքը կարող է հանգեցնել նաեւ նեւրոզի եւ նեւրաստենիայի: Այսպիսի վիճակը հաճախ կարող է հանգեցնել անուշադրության պատճառով վնասվածքների, քրոնիկական հիվանդությունների սրման, դիմադրողականության անկման: Պետք է միջոցներ կիրառել ուժերը վերականգնելու համար:

Գերհոգնածությունը վերացնելու համար.

Պետք է դադարեցնել այն աշխատանքը, որը դարձել է գերհոգնածության պատճառ: Հոգնած նյարդային համակարգը կոտրված ոտքի է նման եւ հանգստի կարիք ունի:

Խմեք կաթով եւ մի գդալ մեղրով թեյ կամ էլ՝ անանուխի թուրմ:

Վերցրեք 1-ական ճ.գ. կատվախոտի եւ ծոքրինի արմատներ, 2 ճ.գ. երիցուկ, ավելացրեք 3 բաժակ սառը ջուր, եռալուց հետո մեղմ կրակի վրա թրմեք 15 րոպե: Եփուկը պետք է 1 րոպե բաց վիճակում թողնել, այնուհետեւ՝ 20 րոպե փակ: Մզել ու քամել: Օգտագործել սենյակային ջերմաստիճանում՝ առավոտյան եւ երեկոյան 1/3-ական բաժակ:

Քնելուց առաջ լոգանք ընդունեք կեչու մզվածքով (գնել դեղատնից): Ջրի ջերմաստիճանը պետք է լինի 36°C:

Ì²ðÌ°È²Î°ðä

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎ ՆՅՈՒԹԵՐ



Ցանկանում եմ նիհարել, թեպետ շատ դիետաներ եմ փորձել, սակայն ոչինչ չի ստացվել: Ընդհակառակը, զգում եմ, որ այդ դիետաների արդյունքում առողջությանս համար հիմնախնդիրներ եմ ստեղծել: Գուցե դուք օգնեք:

Ն.Մանուկյան

Ախալցիխե

Մեր ժամանակներում նիհարելու ընդունված միջոց են դարձել սննդի եւ դեղերի միջեւ միջանկյալ տեղ զբաղեցնող կենսաբանական ակտիվ հավելանյութերը: Դրանք բաժանվում են 3 խմբի:

1) Օրաբաժնի կալորիականությունը նվազեցնելու նպատակով՝ սննդին փոխարինող միջոցներ,

2) նյութափոխանակությունը կարգավորող միջոցներ,

3) ախորժակը նվազեցնող միջոցներ:

Դրանց բաղադրության մեջ առավել հաճախ օգտագործվող ֆերմենտը բրոմելինն է, որը պարունակվում է արքայախնձորի մեջ: Հաճախ գործածվում է հոգեխթանիչ միջոցներ, որոնք ազդում են ախորժակի վրա եւ կախվածություն են առաջացնում (էֆեդրին, կոֆեին): Իհարկե, հավելումներում ակտիվ նյութերի խտությունը մեծ չէ, եւ դրանք առողջության վրա նկատելի ազդեցություն չեն ունենում, սակայն, խթանիչի նկատմամբ զգայունության դեպքում, կարող են անցանկալի հետեւանքներ լինել՝ դեպրեսիա, նյարդային վիճակ, անքնություն, սրտխփոց:

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽԱՂՈՂԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Սուր եւ քրոնիկական նեֆրիտի եւ քրոնիկական հեպատիտի դեպքում արդյունավետ կերպով կիրառվում է խաղողաբուժությունը: Ի դեպ, դեռեւս հին հռոմեացիները չորացրած խաղողը՝ չամիչը, համեղ դեղահաբ էին համարում թոքերի, լյարդի եւ երիկամների հիվանդությունների բուժման համար: Եվ նրանք, փաստորեն, չէին սխալվում:

Խաղողի հատիկները շատ արժեքավոր են նաեւ այն պատճառով, որ մեծ քանակով պեկտինային նյութեր են պարունակում: Դրանք կանխում կամ թուլացնում են օրգանիզմում հայտնված ռադիոակտիվ նյութերի բացասական ազդեցությունը:

Խաղողը բարելավում է երիկամների աշխատանքը, խոչընդոտում է երիկամներում, միզապարկում եւ լեղապարկում քարերի առաջացմանը, բուժում է հոդատապը, քանի որ նպաստում է օրգանիզմից աղերի եւ միզաթթվի հեռացմանը, ինչպես նաեւ չեզոքացնում է թույներն ու օրգանիզմից դուրս մղում այն նյութերը, որոնք ռեւմատիզմի եւ արտրիտի ժամանակ ցավեր են առաջացնում:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄՏՔԵՐ ԸՆԹԵՐՑՈՂ ՄԵՔԵՆԱ

ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ ԱՌԻ՞Թ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Հիմա, եթե ուզում եք Գելանտին ձեր մտքերն ընթերցելու հնարավորություն տալ, հարկ է, որ հսկա սարքի օգնությամբ ֆունկցիոնալ մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիա՝ ՖՄՌՏ, անցնենք: ՖՄՌՏ-ը չափում է ուղեղով շրջանառություն կատարող արյունը: Թեեւ ՖՄՌՏ-ը համարվում է ուղեղի ակտիվության չափման լավագույն մեթոդներից մեկը, այս տեխնոլոգիան կատարյալ չէ եւ ոչ պիտանի շարժական աշխատանքի համար: Ապարատի մեջ տեղավորված հետազոտվողը՝ հաճախորդը, չպետք է շարժվի, ապարատն ինքը մեծ է եւ էժան հաճույք չէ:

Եթե համեմատենք հոլովակի կադրերն ու ուղեղի ակտիվության վերծանումից ստացված պատկերները, կապն ակնհայտ է: Սակայն ուղեղից եկած՝ ազդանշանների հիման վրա Գելանտի բանաձեւով ստացված պատկերը որակով չի փայլում: ՖՄՌՏ նկարներն այն որակին չեն, որ հստակ պատկեր ձեւավորվի: «Քանի դեռ ինչ-որ մեկը չի հորինել ուղեղի ակտիվության հետազոտման-չափման լավագույն՝ մեր մեթոդից ավելի լավ մեթոդ, դժվար թե ստեղծվեն մտքեր ընթերցող, զանգվածային օգտագործման, շարժական ապարատներ»,- կարծում է Գելանտը:

ՔՈՒՆՆ ՈՒ ԵՐԱԶՆԵՐԸ ՎԵՐԾԱՆՈՂ ՍԱՐՔ

Գելանտը չի աշխատում մտքերը վերծանող նոր սարք ստեղծելու ուղղությամբ, դա անում են այլ գիտնականներ: Այսպես. Ճապոնիայի հետազոտող-գիտնականների մի խումբ ներկայումս փորձում է ստեղծել երազները վերծանող սարք՝ հիմնված ՖՄՌՏ-ի վրա: Սա շատ ավելի բարդ է: Հոլովակներով հետազոտության պարագային գիտնականները կարող են համադրել մարդու տեսած պատկերն ու ուղեղի հետազոտության արդյունքները: Երազների պարագային՝ չգիտես մարդու տեսածը: Համակարգը փորձարկելու համար գիտնականները փորձի մասնակիցներին տեղավորել են սարքի մեջ եւ թույլ տվել նրանց կիսաքուն՝ արթուն եւ քնած վիճակների միջեւ մի բան, վիճակում լինել: Հետո գիտնականներն արթնացրել են հետազոտվողներին ու հարցրել, թե նրանք ինչ են տեսել: Տարբեր առարկաների անուններ են հնչել՝ բանալի, արծան, սառցահատ եւ այլն: Ստացված տեղեկության հիման վրա կազմվել է երազներում տեսած պատկերների հարաբերակցությունն ու դուրս բերվել բանաձեւը: Առաջնորդվելով ստացված տեղեկությունների ամբողջությամբ՝ ճապոնացի գիտնականները հաջողել են ճանաչել հետազոտվողների՝ երազում տեսած պատկերների մոտ 60 տոկոսը: Գլխավորը, որ խոչընդոտում-խանգարում է այս փորձից անցնել երազների վերծանման ունիվերսալ սարք ստեղծելուն՝ ուղեղից եկող ազդանշանների յուրօրինակությունն է: Հիմա հարկ է վերծանումը հարմարեցնել յուրաքանչյուր հետազոտվողի: Եթե անգամ դուք պատրաստ եք տեղավորվել ՖՄՌՏ սարքի մեջ, գոյություն չունի ձեր «գիշերային արկածների» մասին պատմող վերծանման ունիվերսալ սարք: Գելանտը չի աշխատում մտքեր վերծանող նոր սարք ստեղծելու ուղղությամբ, նա գիտի, թե ինչ սարք կնախագծեր առաջին հերթին: «Ես կարծում եմ, որ լավ կլիներ, եթե կարողանայինք վերծանել մարդու ներքին՝ անձայն խոսքը: Եթե ստեղծվի մեխանիզմ, որը կկարողանա մարդու անձայն խոսքը ձայնով խոսքի վերափոխել, հնարավոր կդառնա նման տեխնոլոգիայի օգնությամբ մեքենա վարել: Եվ այդ սարքը կդառնա ունիվերսալ թարգմանիչ»,- պնդում է Ջեք Գելանտը:

ՆԵՐՔԻՆ՝ ԱՆՁԱՅՆ ԽՈՍՔ

Որոշ գիտնական-հետազոտողներ մոտեցել են այդ նպատակի իրագործմանը: Այսպես, հոլանդացի գիտնականների խումբն ուսումնասիրել է երկու լեզվի տիրապետողների ուղեղը, հասկանալու համար, թե ինչ պատկերներ են ձեւավորվում փորձի մասնակիցների գլխում (օրինակ՝ ձիու կամ կովի պատկեր): Գիտնականներին հաջողվել է ճշգրիտ պարզել այդ պատկերների նշանակությունը՝ անկախ նրանից, թե ինչ լեզվով են մտածել փորձի մասնակիցները՝ անգլերե՞ն, թե՞ հոլանդերեն: Սակայն երազների վերծանման նման, հարկ էր ամեն անգամ համակարգը հարմարեցնել յուրաքանչյուր մարդու: Այնպես որ, ունիվերսալ թարգմանչի ստեղծումը դեռ հեռու է:

Ամեն դեպքում, մտքերի ընթերցման սարքի մասին խոսակցությունները Գելանտի փորձերի եւ ուսումնասիրությունների հանդեպ ավելի ու ավելի շատ մարդկանց հետաքրքրությունն են շարժել: «Եթե փողոցում մոտենաս մարդուն եւ սկսես պատմել, թե ինչպես է աշխատում նրա ուղեղը, նա անմիջապես կտխրի»,- բացատրում է գիտնականը: Փոխարենը, երբ հետազոտողը մարդկանց ցուցադրում է մի հոլովակ, որտեղ պատկերավոր ցուցադրվում է, թե ինչպես է աշխատում իրենց ուղեղը, մարդկանց մեջ վայրկյանական հետաքրքրություն է արթնանում:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Մարդ իր կյանքի ամեն օրը պիտի ապրի այնպես, ինչպես դա իր կյանքի վերջին օրն է: Պիտի հասցնի սրիկային ասել, որ նա սրիկա է, պիտի հասցնի ատել, սիրել, հավատալ: Վաղը կարող է ուշ լինել:

ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ
(1932-1994)
Հայ գրող

Լավ է զղջալ հենց սկզբից, վերջում զղջալն օգուտ չունի:

ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ
(1705-1791)
Վրաց բանաստեղծ

Ի ծնե թեւավոր լինելը աշխարհի բոլոր բարիքներից ամենալավն է:

ԱՐԻՍՏՈՏԵԼ
(մ.թ.ա.384-մ.թ.ա.322)
Հույն փիլիսոփա

Եվ ամեն մի դժվարություն մեր մեջ միայն ուժերն է բազմապատկում:

ՎԵՐՀԱՐՆ
(1855-1916)
Բելգիացի բանաստեղծ

Ճշմարտությունը կարող է սպասել, քանզի նրա առջեւում երկար կյանք կա:

ՇՈՊԵՆՀԱՈՒԵՐ
(1788-1860)
Գերմանացի փիլիսոփա

Քո աշխատանքի գնահատականը սպասիր անկանխակալ եւ անբարյացակամությունից ու նախանձից ձերբազատված սերունդներից:



ԴՅՈՒ ԲԵԼԼԵ
(1522-1560)
Ֆրանսիացի բանաստեղծ

Եթե դուք ասում եք միայն ճշմարտությունը, ձեզ էլ ոչինչ պետք չէ հիշել:

ՄԱՐԿ ՏՎԵՆ
(1835-1910)
Ամերիկացի գրող

Խմելը թողեցի, ծխելը թողեցի, կնոջս էլ թողեցի: Կնոջս ինչո՞ւ... որպեսզի շատ չուրախանա:

ԼԵՎՈՆ Գ.
«Վրաստանի» ընթերցող

²ÜºÎ¸à†Üºð

** Աղջիկը.*

- Ես վերջապես հանձնեցի վարորդական իրավունքի բոլոր քննությունները: Ցանկանում եմ մեքենա գնել: Գուցե խորհուրդ կտաս, թե որն է աղջկա համար ամենալավ մեքենան:

Տղան.

- Լվացքի:

** - Ինչպե՞ս կարելի է ավելի լավ ավարտել վեճը կնոջ կետ:*

- Մեռած ձեւացիր:

** Որդին հարցնում է հորը.*

- Հայրի՛կ, դու հիշո՞ւմ ես, թե ինչպիսի օր էր, երբ հանդիպեցիր մեր մայրիկին:

- Անհաջող, տղա՛ս:

** - Սիրելի՛ս, դու ինչպիսի՞ սուրճ ես նախընտրում:*

- Ես կնախընտրեի թունդ, նուրբ եւ նպատակասլաց, որը շուռ կտար իմ ամբողջ ներքնաշխարհը ոտքից գլուխ, կբացեր ինձ համար գայթակղությունների եւ անզսպելի զգացմունքայնության աշխարհը, որը գլխապտույտ կառաջացներ եւ կտար նոր զգացողություններ...

- Լսի՛ր, գուցե քեզ պարզապես օղի՞ լցնեմ:

** - Երբ ես գիշերը վերադառնում եմ տուն, կինս ոչ մի բառ չի ասում, միայն նայում է ժամացույցին:*

- Քո բախտը դեռ բերում է: Իմ կինն օրացույցին է նայում:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորած կառավարական պատվիրակությունը նոյեմբերի 20-22-ին, աշխատանքային այցով, գտնվում էր Թուրքմենստանում: Պատվիրակությունը մասնակցեց Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների խորհրդի հերթական նիստին:

Այցի շրջանակում, Հովիկ Աբրահամյանը հանդիպում ունեցավ Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովի հետ: Հայաստանի վարչապետը հանդիպումներ է ունեցել նաեւ Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի եւ Ղրղզստանի կառավարությունների ղեկավարների հետ:

Հանդիպմանը զրուցակիցները բարձր են գնահատել հայ-թուրքմենական հարաբերությունները, կարեւորել առեւտրատնտեսական ոլորտում փոխգործակցության զարգացումը եւ անհրաժեշտ համարել գործնական քայլերի իրականացումը՝ ուղղված առկա ներուժի իրացմանը:

Հայաստանի վարչապետը եւ Թուրքմենստանի նախագահը քննարկել են տնտեսության տարբեր ոլորտներում համատեղ ծրագրերի իրականացմանն ուղղված մի շարք հարցեր:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՈՒՂՂԱԹԻՌԻ ԽՈՑՄԱՆ ՄԻՋԱԴԵՊԸ

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը նոյեմբերի 16-ին ընդունել է ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անջեյ Կասպրշիկին: Հանդիպմանը քննարկվել են Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում տիրող իրավիճակին վերաբերող մի շարք հարցեր:

Անդրադառնալով վերջերս ուսումնավարժական թռիչք իրականացնող Պաշտպանության բանակի ուղղաթիռը խոցելու միջադեպին՝ Բակո Սահակյանը Ադրբեջանի գործողություններն անվանել է ստոր եւ ապակառուցողական: Նա նշել է, որ Ադրբեջանի նման պահվածքը վտանգում է կայունության ու խաղաղության պահպանումը տարածաշրջանում եւ խոչընդոտում ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական ջանքերը:

Նոյեմբերի 19-ին կայացավ Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկի հանդիպումը: Հանդիպման ընթացքում քննարկվել են նոյեմբերի 12-ին Ադրբեջանի ՋՈՒ-ի կողմից խոցված ուղղաթիռի անձնակազմի ճակատագիրը պարզելու եւ դիակները վերադարձնելու ուղղությամբ ԵԱՀԿ գործող նախագահի, ինչպես նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների կողմից իրականացվող քայլերի համակարգմանն առնչվող հարցեր:

ԳՐԱՆՑՎԵԼ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՃ

Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2014 թվականի հունվար-հոկտեմբերին 4,2 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալների, երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացվել են նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները: Արդեն երկրորդ ամիսն է՝ անկում է ապրում շինարարության ոլորտը, որն այս տարեսկզբից վերագտել էր աճի միտումը ֆինանսատնտեսական ճգնաժամի անկումից հետո: Շինարարության ծավալը նվազել է 4,4 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում 0,7 տոկոսով անկում է գրանցվել տասը ամիսների ցուցանիշով:

2013թ. հունվար-հոկտեմբերի համեմատ, այս տարի ծառայությունների ծավալն աճել է 7,2 տոկոսով, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը՝ 6,5 տոկոսով: Միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 7,8 տոկոսով: Արտաքին ապրանքաշրջանառության ծավալները, 2013թ. հունվար-հոկտեմբերի համեմատ, աճել են 3,6 տոկոսով (4 միլիարդ 876,5 մլն ԱՄՆ դոլար), ընդ որում՝ արտահանումն աճել է 2,9 տոկոսով (1 միլիարդ 250 մլն դոլար), իսկ ներմուծումը՝ 3,8 տոկոսով (3 միլիարդ 626,5 մլն դոլար):

ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՊԱՐԶԵՑՎՈՒՄ Է

Հայաստանի կառավարությունն իր նախկին որոշումներից մեկում կատարեց լրացումներ, որոնք պայմանավորված են գործարար միջավայրի բարելավման աշխատանքային ծրագրով:

Իրականացվում է մաքսային ընթացակարգերի պարզեցում եւ հայտարարատուների տարածայնությունների կարգավորում: Մասնավորապես, առաջարկվում է բոլոր այն դեպքերում, երբ մաքսային մարմնի եւ հայտարարատուի միջեւ տարաձայնություններ են առաջ գալիս արտաքին տնտեսական դասակարգման ապրանքների հավաստագրի վերաբերյալ, չխոչընդոտել ապրանքների դուրսբերմանը, մաքսազերծել, այնուհետեւ տարաձայնությունը կարգավորել հետագայում: Այդ նպատակով, պետք է հայտարարատուն ներկայացնի բանկային կամ ապահովագրական երաշխիք ու դրա հետ կապված լրացուցիչ տեղեկություններ:

Ըստ վարչապետ Հովիկ Աբրահամյանի գնահատման, սա եւս մեկ քայլ է Հայաստանում գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ:

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ՝ ՆԱԵՎ ՉԱՇԽԱՏՈՂ ԿԱՆԱՆՑ

«Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի օրենքի նախագիծը կարգավորում է ժամանակավոր անաշխատունակության նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է ժամանակավոր անաշխատունակության նպաստի հասկացությունը, տեսակները, դրա հաշվարկման, նշանակման եւ վճարման պայմաններն ու կարգը:

Հաշվի առնելով ժամանակավոր անաշխատունակության նպաստների ոլորտում առկա խնդիրները եւ հղիության ու ծննդաբերության ժամանակահատվածի համար չաշխատող մայրերին սոցիալական աջակցություն տրամադրելու անհրաժեշտությունը՝ կառավարության ներկայացրած նախագծով առաջարկվում է հղիության եւ ծննդաբերության նպաստը վերանվանել մայրության նպաստ, պահպանել մայրության նպաստի չափը եւ միջին ամսական աշխատավարձը հաշվարկելու կարգը՝ սահմանելով մայրության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձի առավելագույն շեմ՝ նվազագույն ամսական աշխատավարձի 15-ապատիկի չափով:

Նախագծով առաջարկվում է նաեւ Հայաստանի օրենքով սահմանել, որ հղիության եւ ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի համար մայրության նպաստ է նշանակվում նաեւ չաշխատող կնոջը:

«ՊԱՏԱՍԽԱՆ՝ 100 ՏԱՐԻ ԱՆՑ» ԾՐԱԳՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Երեւանի Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում նոյեմբերի 18-ին տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության վավերագրերի շուրջ գեղանկարչական, գրաֆիկական աշխատանքների եւ քանդակի մրցույթի մասնակիցների եւ մասնագիտական հանձնաժողովի ամփոփիչ հանդիպումը:

Ներկայացված էսքիզային աշխատանքների քննարկման արդյունքում, հանձնաժողովը որոշեց մրցույթի մասնակցության պայմանագրեր կնքել 24 հեղինակների հետ ստեղծվելիք աշխատանքները կանոնակարգելու նպատակով: 1914թ. նոյեմբերի 25-ից 2015թ. հունվարի 25-ը՝ մրցութային փուլի ընթացքում, հանձնաժողովի անդամները կայցելեն երիտասարդ ստեղծագործողների արվեստանոցներ, կտան անհրաժեշտ ցուցումներ:

2015թ. հունվարի 26-ին ավարտուն աշխատանքները կհավաքվեն մեկ հարկի տակ՝ Ե.Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում:

Մրցույթին մասնակցում են մասնագիտական կրթություն ունեցող մինչեւ 40 տարեկան ստեղծագործողները:

«Պատասխան՝ 100 տարի անց» խորագրով Հայոց ցեղասպանության վավերագրերի շուրջ գեղանկարչական, գրաֆիկական աշխատանքների եւ քանդակի մրցույթն իրականացվում է Ե.Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի եւ Հայաստանի ազգային պատկերասրահի կողմից՝ ՀՀ մշակույթի նախարարության եւ «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության աջակցությամբ:

75 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿ

Համաշխարհային բանկը 75 մլն ԱՄՆ դոլարին համարժեք բյուջետային վարկ կտրամադրի Հայաստանին: Այդ նպատակով, նոյեմբերի 19-ին ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանը եւ ՀԲ հայաստանյան գրասենյակի տնօրեն Լաուրա Բեյլին ստորագրել են «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Զարգացման քաղաքականության երկրորդ վարկ» վարկային համաձայնագիրը: Վարկը տրվում է արտոնյալ պայմաններով՝ 25 տարի մարման ժամկետով, որից 14,5-ը՝ արտոնյալ, եւ լողացող տոկոսադրույքով (6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR + փոփոխական մարժա (0,5 %)):

Նման բյուջետային վարկերը հնարավորություն են տալիս ֆինանսավորելու բյուջեով նախանշված կարեւորագույն ծախսերը, մեղմելու դեֆիցիտը եւ ապահովելու կայուն զարգացում: Վարկն ստանալու համար, հայկական կողմը կատարել է Համաշխարհային բանկի նախանշած բոլոր թիրախները, այդ թվում՝ գործարար միջավայրի բարելավումը, տեսչական մաքսային բարեփոխումների անցկացումը:

270 ՄԼՆ ԴՈԼԱՐԻ ՎԱՐԿ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱԿԱՅԱՆԻՆ

Հայաստանի կառավարությունը հաստատեց «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հարցում համագործակցության մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը: Համաձայնագրով ռուսական կողմը հայկական կողմին տրամադրում է մինչեւ 270 մլն դոլարի չափով պետական արտահանման վարկ էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման համար:

ՆԵՐԿՐՎԵԼ Է ԾՈՒՐՋ 36 ՀԱՋԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ

Հայաստանն ավելացրել է ավտոմեքենաների ներմուծումը: Այս տարվա ինն ամիսներին Հայաստան է բերվել 35 հազար 901 ավտոմեքենա, որը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելի է 7 հազար 776-ով: Հայաստանի մաքսային ծառայության տվյալներով, Հայաստան ներմուծված ավտոմեքենաների զգալի մասը՝ 22 հազար 450 ավտոմեքենա, մինչեւ 5 հազար դոլար արժողությամբ են: 5-10 հազար դոլար արժողությամբ մեքենաների թիվը կազմել է 8300: Ներմուծված մեքենաներից 2132-ը եղել են 10-15 հազար դոլար արժողությամբ, 2019 ավտոմեքենան՝ 15-30 հազար դոլար արժողությամբ եւ միայն հազար ավտոմեքենա արժեցել է 30 հազար դոլարից ավելի:

2013 թվականին Հայաստան էր ներմուծվել 41 հազար 102 ավտոմեքենա: Նախորդ տարվա համեմատ, յուրանիշն աճել էր 6430-ով:

ԱՎԵԼԱՆՈՒՄ Է ԶԲՈՍԱԾՐՋԻԿՆԵՐԻ ԹԻՎԸ

Հայաստանում զբոսաշրջության ոլորտը շարունակում է կայուն աճ գրանցել: 2014թ. հունվար-սեպտեմբերին հանրապետություն է ժամանել 941 հազար 151 զբոսաշրջիկ, կամ 2013թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ յուրանիշը աճել է 13,6 տոկոսով: Ինչպես տեղեկացրին Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունից, 2014թ. հունվար-սեպտեմբերին զբոսաշրջության նպատակով Հայաստանից մեկնել է 886 հազար 251 մարդ կամ 2013թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ յուրանիշն աճել է 12,5 տոկոսով: Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության գերակա ճյուղերից է: Վերջին տասնամյակում ոլորտի աճը տարեկան գերազանցում է 15-20 տոկոսը: Զբոսաշրջության խթանման նպատակով, Հայաստանն իրականացրել է նաեւ վիզային ռեժիմի դյուրացման եւ բաց երկնքի քաղաքականություն՝ հնարավորինս մատչելի դարձնելով զբոսաշրջիկների համար Հայաստան այցելությունները:

ԿՐԹՕՋԱԽ

ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ ՔԵԶ, «ՈՍԿԵ ՓԵՏՈՒՐ»

Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցում հիմնվել է «Ոսկե փետուր» ակումբը:

Ակումբի ղեկավարն է 10-րդ դասարանի աշակերտուհի Աղունիկ Իսրայելյանը, անդամները՝ դպրոցի 5-11-րդ դասարանի աշակերտները: Նպատակը՝ հանդիպումներ մշակույթի աշխարհի ներկայացուցիչների հետ, այդ աշխարհի կարեւոր իրադարձություններին արձագանքելը:

Եվ նորաստեղծ այդ ակումբի անդրանիկ հյուրը մի քանի բանաստեղծական գրքերի հեղինակ, Թբիլիսիում ստեղծագործող, ռուսագիր Մարինա Կիրակոսյան-Մոսեսովան էր:

Միջոցառումն իր նոր ձեւաչափի մեջ օգնեց դեռահաս պատանիներին ու աղջիկներին ինքնաճանաչման կարեւոր մի փուլ անցնել. գուցե դա նրանց կյանքի առաջին վերընթաց քայլն էր իրենց ուժերի ու կարողությունների փնտրումներում: Ուրախալին այն ակներեւ հաջողությունն էր, որին վկա եւ ականատես եղան միջոցառմանը ներկա հյուրերը, ծնողները, դպրոցի մանկավարժներն ու տարբեր դասարանների սաները:

Ամեն ինչ ընթացավ ըստ կարգի: Աղունիկը եւ մյուս բոլոր անդամները պատկերավոր, համոզիչ ու բովանդակալից ամփոփումներով ներկայացրեցին Մարինա Կիրակոսյան-Մոսեսովայի կենսագրությունն ու ստեղծագործությունները: Հայերեն եւ անթերի ռուսերենով արտասանվեցին եւ վերլուծվեցին նրա բանաստեղծությունները:

Երեկոյի կազմակերպիչներին շնորհակալության ջերմ խոսքեր ասաց միջոցառման հերոսուհին՝ Մարինա Կիրակոսյան-Մոսեսովան, ով ներկաների համար սիրով ընթերցեց իր գործերից: Խրախուսեցին, գնահատեցին եւ ուսանելի խրատներ հղեցին հյուրերը՝ «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, «На холмах Грузии» գրական հանդեսի խմբագիր Միքայել Այդինովը, բանաստեղծ Միխայիլ Անանովը, Գերմանիայի Բոնն քաղաքի «Պուշկինյան միության» անդամ Մարինա Նովիկովան, Սանկտպետերբուրգյան մշակութա-լուսավորչական կենտրոնի ներկայացուցիչ Նատալյա Մարինչովան, մանկավարժական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Բերտա Նեմսաձեն: Իսկ դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանը, գեղեցիկ միջոցառման համար իր գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնելուց հետո, ակումբի պատվավոր անդամության վկայագրեր հանձնեց Վ.Բայբուրթյանին, Մ.Այդինովին, Մ.Անանովին:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2014»

ԲԵԹԹԻՆ ԵՐՐՈՐԴՆ ԷՐ, ԻՍԿ ԼԻԶԻՆ՝ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴԸ

Նոյեմբերի 15-ին Մալթայում անցկացվեց «Մանկական եվրատեսիլ-2014» երգի միջազգային հեղինակավոր մրցույթը: Մրցույթի մասնակից պետությունները 16-ն էին. այդ թվում՝ Վրաստանն ու Հայաստանը:

Հայաստանի ներկայացուցիչ Բեթթին, ով «Արեւի մարդիկ» («People of the sun») երգով հանդես եկավ մրցույթին երկու տղա պարողի ու երեք աղջիկ-ակրոբատների հետ, զբաղեցրեց երրորդ տեղը:

Վրաստանի ներկայացուցիչ Լիզի Ջափարիձեն «Երջանիկ օր» (Happy Day) երգով զբաղեցրեց 11-րդ հորիզոնականը:

Մրցույթի հաղթող ճանաչվեց Իտալիայի ներկայացուցիչ Վինչենցո Քենթիելլոն, իսկ Բուլղարիան ներկայացնող եռյակը՝ Քրիսիան, Հասանը եւ Իբրահիմը գրավեցին երկրորդը տեղը:

ՄԵԾԱՐՈՒՄ

ԹԲԻԼԻՍԻԻ ԴԻՆԱՄՈՅԱԿԱՆՆԵՐԸ՝ ՍՊՈՐՏԻ ԱՍՊԵՏ

ՀԱՆԴԻՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՆՇՎԵՑ ԹԲԻԼԻՍԻԻ «ԴԻՆԱՄՈՅԻ» ԿՈՂՄԻՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՉԵՄՊԻՈՆԻ ԿՈՉՈՒՄԸ ՆՎԱՃԵԼՈՒ 50-ԱՄՅԱԿԸ

1964 թվականի նոյեմբերի 18-ին, Տաշքենդում, Թբիլիսիի դինամոյականները 75 հազար մարզասերների ներկայությամբ, ԽՍՀՄ չեմպիոնի կոչման համար լրացուցիչ մրցամարտում՝ 4:1 հաշվով, պարտության մատնեցին Մոսկվայի «Տորպեդոյին» եւ առաջին անգամ դարձան Խորհրդային Միության չեմպիոն:

Նոյեմբերի 20-ին Թբիլիսիում, Շոթա Ռուսթավելու անվան թատրոնում, Վրաստանի սպորտի նախարարության, երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի մարզական լրագրողների ասոցիացիայի Թբիլիսիի քաղաքապետարանի եւ սակրեբուլոյի նախաձեռնությամբ անցկացվեց Թբիլիսիի «Դինամոյի» կողմից Խորհրդային Միության չեմպիոնի կոչումը նվաճելու 50-ամյակին նվիրված հոբելյանական երեկոն:

Հանդիսությանը Վրաստանի սպորտի նախարար Լեւան Ղիփիանին հայտարարեց, որ 1964 թվականի Թբիլիսիի «Դինամոյի» ողջ կազմը պարգեւատրվել է Վրաստանի մարզական ամենաբարձր «Սպորտի ասպետի» կոչումով:

Հոբելյանական երեկոյին եւ չեմպիոնի տիտղոսը նվաճելու 50-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներին ներկա էին 1964 թվականի «Դինամոյի» վետերաններ՝ Գիորգի Սիճինավան, Վլադիմիր Բարկաիան, Իլիա Դաթունաշվիլին, Մուրթազ Խուրցիլավան, Նոդար Լեժավան... Ներկա էին նաեւ այն ֆուտբոլիստների եւ մարզիչների ընտանիքի անդամները, ովքեր արդեն վախճանվել են: Մասնակիցների թվում էին հատուկ այդ նպատակով Նալչիկից ժամանած կաբարդինցի ճանաչված ֆուտբոլիստ Ալեքսանդր Ապշեւի ընտանիքի անդամները, ֆուտբոլիստ, ով 1964 թվականին Թբիլիսիի «Դինամոյի» կազմում դարձավ ԽՍՀՄ չեմպիոն:

Նոյեմբերի 18-ին Բորիս Պայճաձեի անվան «Դինամո-արենա» մարզադաշտում բացվեց «ԽՍՀՄ 1964 թվականի չեմպիոն՝ ոսկի տղաներին» նվիրված հուշատախտակ: Նույն օրը Թբիլիսիում Շատբերաշվիլու փողոցում բացվեց եւս մի հուշատախտակ, նվիրված Թբիլիսիի «Դինամոյի» եւ Խորհրդային Միության հավաքականի դարպասապահ Սերգո Կոտրիկաձեին:

Հոբելյանական հանդիսությունների շրջանակներում անցկացվեցին լուսանկարչական ցուցահանդեսներ, եւ տեղի ունեցավ Թբիլիսիի «Դինամոյի» չեմպիոնի տիտղոսի նվաճման 50-ամյա հոբելյանին նվիրված գրքի շնորհանդեսը: Հանդիսությունների շրջանակներում, նոյեմբերի 20-ին Թբիլիսիի «Լոկոմոտիվ» խաղադաշտում կանգնեցվեց վրաց լեգենդար ֆուտբոլիստ, Եվրոպայի եւ Խորհրդային Միության չեմպիոն Միխեիլ Մեսխու՝ «Վրացական Պելեի» հուշարձանը: Նշենք, որ «Լոկոմոտիվ» խաղադաշտը կրում է Միխեիլ Մեսխու անունը:

Ավելացնենք, որ երեկ՝ նոյեմբերի 21-ին, հատուկ չվերթով Տաշքենդ մեկնեց Թբիլիսիի «Դինամոյի» 1960-1980 թվականների կազմի վետերանների պատվիրակությունը: Նրանք այսօր՝ նոյեմբերի 22-ին, խորհրդանշական հանդիպում կանցկացնեն Տաշքենդի «Պախտակորի» վետերանների հետ: Վրացական պատվիրակությունը գլխավորում է սպորտի նախարար Լեւան Ղիփիանին:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՍՊՈՐՏ ՍՊՈՐՏ ՍՊՈՐՏ

ՖՈՒՏԲՈԼ. ԿՐԿԻՆ ՑԱՎԱԼԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Անցկացվեցին Եվրոպայի ֆուտբոլի 2016 թվականի առաջնության խմբային մրցաշարի հերթական հանդիպումները: «D» խմբում հանդես եկող Վրաստանի հավաքականը սեփական հարկի տակ 0:4 հաշվով պարտություն կրեց Լեհաստանի հավաքականից, իսկ «I» խմբում ելույթ ունեցող Հայաստանի ազգային ընտրանին Լիսաբոնում նվազագույն 0:1 հաշվով զիջեց Պորտուգալիայի հավաքականին: Միակ գոլի հեղինակն էր մայրցամաքի լավագույն ֆուտբոլիստ Ռոնալդոն:

ՁԱՐՄԱՑԵՔ, ՌԵԳԲԻՆ ՄՈՒՏՔ Է ԳՈՐԾՈՒՄ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ

Նոյեմբերի 14-ին Ախալքալաքիի թիվ 5 հանրային դպրոցի խաղադաշտում առաջին անգամ անցկացվեց ռեգբիի մունիցիպալային առաջնությունը: Մրցաշարն անցկացվեց տարիքային երեք՝ 8-11, 12-13 եւ 14-16 տարեկանների կատեգորիաներով: Երկու կատեգորիաներում ուժեղագույնը ախալքալաքցիներն էին, իսկ երրորդում առաջին տեղն զբաղեցրեց Պրտենա-Չունչխա թիմը:

Մրցաշարն անցկացվեց Վրաստանի ռեգբիի աջակցության լիգայի օժանդակությամբ:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Բառի մաս: 6.Վրաստանում ծնված երիտասարդ երգիչ Մկրտչյանը: 9.Հագուստի մաս: 10.Վրաստանի ...ը: 12.Դեմքի մաս, չանա: 13.Սկիզբ, սկսվելը: 17.Անխիղճ, գութից զուրկ: 20.Նկարչի արարածը: 22.Վիրահայոց թեմին կից կիրակնօրյա, եղիա ...ի անվան դպրոց: 24.Անեզր, անսահման: 26.Աղի եւ մկան խառնուրդը: 29.Քուռ գետը թափվող, սահմանային գետ: 31.Երաժշտական ստեղծագործություն: 34.Ոչ գեղեցիկ, անդուր: 36.Մեղվի հավաքածը: 37.Բնությունը սիրող: 38.Աչքի կենտրոնում: 39.Իգական անուն: 40.Արեւադարձային միրգ: 42.«Ամպերը դանդաղ, ուղտերի նման, նոր են ջուր ... ձորից բարձրանում» (Հովհ.Թումանյան): 44.... Աբաս Կատինա: 46.Նոտաներից մեկը: 47.Չամուսնացած: 49.Ժամանակի միավոր: 51.Լուծում, վճռում, ... կայացնել: 53.Վրաց բանաստեղծուհի ... Ակոբիձե: 57.Այբ, բեն, գիմ: 59.Մի դարավոր ... (ուղղ. հոլովով) տակ»: 61.Չտատանվող, անսասան: 62.Տետրի ...: 63.Պարատեսակ: 64.«Ժողովրդական երգիչ» նախագծի ֆինալիստ ... Թաշչյան:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Անկողնու դարս: 3.Վսեմի հականիշը: 4.Արեգակնային համակարգի մոլորակ: 5.Վայրի գիշատիչ: 7.Ժիր, շարժուն: 8.Արծիվ, բազե, լոր: 11.Կովերի ...: 14.Քիմիական էլեմենտ: 15.Արեւելյան մարզաձեւ: 16.Ասիական պետություն: 18.Ոչ լայն: 19.Ճապոնական մարզաձեւ: 21.Դերձակի գործը: 23.Պնակ, աման: 25.Չկանգնել, չպառկել, այլ: 27.Նշանի, ամուսնական: 28.Կավե աման: 29.Մարդկանց բազմություն: 30.Շաքարի գործարան Վրաստանում: 32.«... զքեզ Հայոց աշխարհ»: 33.Բարոյազուրկ, ոչ բարոյական: 35.Հաղորդավար, երգիչ, շոումեն ... Աղախանյան: 41.«... սազի մեջն գոված» (Սայաթ-Նովա): 43.Կեչի, թխկի, բարդի: 45.Անտարկտիդայի հակառակ կողմում: 48....-բանջարեղենի խանութ: 50.Ժխտական նախածանց: 51.Տարվա խորհրդանիշ: 52.Իքս, ..., զեթ: 54.Մայր երակ: 55.Նյութ, հումք: 56.Անտառային վայրի պտուղ: 58.Սառնարանի մաս: 60.Ոչ էգ:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ասպատակ: 9.Սիրած: 10.Բասկ: 11.Բելգրադ: 13.Եզնիկ: 16.Լոռ: 17.Թիլ: 19.Անխեթ: 22.Աչքիս: 24.Ինգմար: 25.Միկա: 27.Հաղպատ: 29.Ապարոշ: 32.Ակվարել: 33.Ջիբրով: 35.Աղոտ: 37.Կուտ: 39.Ուղերձ: 40.Մթիկ: 43.Նաեւ: 44.Վասո: 47.Ասր: 49.Սիրող: 50.Եվրո: 53.Վերեւ: 54.Ուղտ: 55.Աղել: 57.ԷՀՄ: 58.Երգնկա:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Հսկել: 2.Տանգո: 3.Ռաբաթ: 4.Ոսկե: 5.Կրոն: 6.Կծիկ: 8.Կաղիս: 12.Լոնք: 14.Ջինգ: 15.Իդեա: 18.Ասիա: 19.Անոպա: 20.Խմորեղեն: 21.Թրաշ: 23.Իմպորտ: 26.Կտավ: 28.Ալիկ: 29.Ավո: 30.Արաղ: 31.Ոլորան: 34.Բուքսիր: 36.Տձեւ: 38.Սիս: 41.Թաղում: 42.Կրետե: 45.Ասեղ: 46.Որեւէ: 48.Արագ: 51.Ողն: 52.Հլա: 56.Եկ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445